ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2022 թվականի N 10-Ա

ՀԱՆՁՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2114-Ա որոշման 2-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Բարեկամության թիվ 2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկից 157581.3 դրամ սկզբնական արժեքով, 35.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնման-ընդունման աշխատանքները իրականացնելու համար ստեղծել հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Մհեր Գևորգյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

2) ***Մարտուն Պողոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ,

3) ***Կարեն Հովհաննիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի քարտուղարության վարչատնտեսական բաժնի ավագ մասնագետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հունվարի 17
ք. Հրազդան